

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ, Ապրիլի փողոց
ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ճիշտ դիմաց
Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS
Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒԾՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ
ՄԷԿ անգլիական համար տողը 3 ՂՂՋ. ողջ
ՄԷԿ անգլամե անգլիական ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	ՂՂՋ. ողջ 100
Վեցամսեայ	» 55
Եռամսեայ	» 30
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկան	Ձր. 26
Վեցամսեայ	» 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԻՐ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՋԱՆԱՄ
ՈՒՆԻՒ ԴՐՈՒԹԻՒՆՅ

ՓԱՐՈՍ

Լ. ՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԲԱԿԱՆ
ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԽԵՐԵՔՇԱԲԹԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
ՏՃՈՐԵՆ-ԽԱՐԱԳԻՐ Յ. ԱՂՓԻԱՐ

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԳ
Բաժանորդագրութեանց և ծանուցումանց համար դիմել թերթի մատակարարին առ
ՏԻԱՐ ՍԱՐԳՍԻ ՍԻՐԱՆԵԱՆ
Թղթատարական Տուփ Թիւ 732
ԳԱՀԻՐԷ
Pour les abonnements et les annonces s'adresser à l'Administrateur du journal:
M. SARKIS MIRANIAN
Boîte postale N° 732
Le Caire

ՀԱՅԵՐՆ ՅԱՄԵՐԻԿԱ

Անշուշտ մեր ընթերցողները մեծ հաճոյքով պիտի կարդան Միացեալ-Նահանգներու Գաղթականութեանց տեսուչ Պ. Թոմըս Ռիչիի տարեկան տեղեկագրին հետեւեալ հատուածը, ուր խիստ պատուաբեր յիշատակութիւն մը եղած է Նոր Աշխարհի մէջ գտնուող մեր հայրենակիցներու մասին:

Պ. Ռիչի նախ կը հաստատէ թէ Ամերիկա գաղթողներու թիւը ընդհանուր առմամբ շատ մեծցած է քսաներորդ դարու այս առաջին տարւոյն մէջ:

Այս երեւոյթը երկու պատճառներու կը վերագրէ. նախ օտար երկիրներու մէջ ճարտարարուեստի կաշու միջակային և ապա Ամերիկեան ճարտարարուեստի յարաճուն յառաջդիմութեան:

Այդ տեղեկագրին մէջ Պ. Ռիչի կ'ըսէ թէ «Հարկու հազարներով Նիւ-Եորք եկող գաղթականութիւնը ընդհանրապէս կորովի աշխատաւորներէ և ճարտար արուեստագէտներէ կը բաղկանայ»:

«Այս աշխատաւորներու մեծագոյն մասը Հարաւային Իտալիայէ, Հայաստանէ, Սլովենիայէ և Յունաստանէ եկած են»:

«Հոս եկող գաղթականները, կը յաւելու տեղեկագիրը, Ամերիկա հաստատուելու եկած են և բնաւ մտքերն ունեն չեն անցնիր իրենց հայրենիքը վերադառնալ»:

Ամերիկա հաստատուող Հայերու թիւը այնքան ստուար է և ուշադրութեան արժանի որ անշուշտ նշանակութեան զուրկ չի կրնար ըլլալ վերոգրեալ յիշատակութիւնը որով կը տեսնուի թէ այդ ընդարձակ երկրին մէջ Հայերը արդէն սկսած են իրենց տեղն ունենալ և իբրեւ աշխատութեան յարմար մարդիկ՝ իտալացիներէն անմիջապէս վերջը եկող ազգն են կարեւորութեան տեսակէտով:

Երկրին ընծայած առաւելութիւնները, ճարտարարուեստներու վիթխարի ընդարձակութիւնը շատ շահաբեր ասպարէզներ կը բռնան մեր հայրենակիցներուն առջև և անտարակոյս ասոնք պիտի գիտնան օգտուել իրենց արուած գիւրութիւններէն, տիպար գաղթականութեան մը օրինակը տալով՝ իրենց բնածին յատկութիւնները զէպի լաւ գործածելով, այնպիսի երկրի մը մէջ ուր զարգացումը այնքան բարձր աստիճանի մը հասած է և ուր գործելու և մտածելու ազատութիւնը անսահման կերպով կը տրուի իրենց:

Ամերիկայի Հայ գաղութը խիստ գեղեցիկ ապագայ մը ունենալու կոչուած է և այս ակնկալութիւնը թերեւս մին ըլլալ այն հաշուադրուած խիթարութիւններէն որ մեր ազգին դառն վշտերէն բան մը կրնան թեթեւեղել:

ՎԱՐՊԵՏ ՔՈՒՆԻՅՈՒ ԳԱՐՏՆԻՔԸ

(Ն ՈՐ Ա Վ Է Պ)
(Շար. Սախուրդ Թիւ Է և վերջ)

— Բարի իրիկուն, վարպետ Քոնիյլ, կը պողային իրեն գեղացիք, ջաղացքը միշտ կը բանի կոր, հէ՛:

— Միշտ, տղաքս, կը պատասխանէր զուարթ ձայնով մը. փառք Աստուծոյ գործը անպակաս է:

Ու երբ իրեն հարցնէր թէ սառա, նային ո՞ր ծակէն այդպի գործ կու գար իրեն, մէկ մատը շրթունքին վրայ կը դնէր և խորհրդաւոր կերպով մը՝ «Սո՛ւս, կ'ըսէր, զբոս համար կաշխատիմ կոր»:

Ասիկ աւելի բան չիմացանք իրմէ: Իսկ մարդ մտքն անգամ անցնելու չէր ջաղացքին մէջ անցած դարձած տեսնել. պզտիկ Վիլիթը անգամ չէր կրնար մտնել ներս... Երբ առջեւն անցնէր, կը

տեսնէր միշտ դուռը ամուր մը գոցուած, խոշոր թեւերը դռնաւոր վրայ, ծերուկ էջը որ սարահարթին խոտը կը ճարակէր և նիհար ու մեծ կատու մը որ տեսնէր պատահանին ծայրը կծկուած, ու շար երեւոյթով մը ճեղքի կը նայէր: Բոլոր ասիկա խորհուրդ կը հոտէր: Ամեն մարդ իր հասկցած կերպով կը բացատրէր Քոնիյլի գաղտնիքը, բայց ընդհանուր կարծիքը ան էր որ ջաղացքին մէջ աւելի ոսկիի պարկեր կային քան ալիւրի:

Վերջ ի վերջոյ, սակայն ամեն բան մեջտեղ ելաւ. տեսէր ինչպէս: Գեղի եւ ըրտասարգութիւնը սրինգովս պարել արուած ատենս, նշմարեցի օրին մէկը որ մեծ տղաս և պզտիկ Վիլիթը իրարու սիրահարուէր էին: Չնեղացայ, որովհետեւ վերջապէս նորէն Քոնիյլ անուր պատիւ կը վայելէր մեր մէջ, և յետոյ «Եւթն» պիտի գար պզտիկ Վիլիթին թոշնի պէս ոստոսելը տեսնելով տանս մէջ: Միայն թէ, մեր սիրահարները յաճախ իրարու հետ միտակ ըլլալու առիթը ունենալով, վախցայ որ մի գոցէ արկած մը պատահի և ուզեցի խնդրել ժամ առաջ կարգադրել: Ջաղացքը ելայ վարպետ Քոնիյլը ի հետ խօսելու այս մասին... Այն ծեր վճռակը, տեսնելու էր ինչ կերպով ընդունեց զիս. անկարելի եղաւ դուռը բանալ տալ: Գէշ աղէկ ըսելիքս ըսի փականքին ծակէն, և որքան ատեն որ խօսեցայ, մեծ նիհար կատուն գէի մը պէս գլխուս վերեւ կը ֆշար: Երբեք թող չտուաւ որ խօսքս լսեցնեմ ու բրաբրէն զիս սրինգին զրկեց, ըսելով որ եթէ տղաս համար աղջիկ գտնել կ'ուզէի կրնայի երթալ նոր ջաղացքը փնտռել... Արինք գլուխս ցատկեց այս խօսքերը լսելով, բայց կրցի ինքզինքս զսպել, և ծերուկը իր երկանաբարին հետ ձգելով գլուխ գլխի, գարձայ տղաց գէշ լուրը հաղորդեցի... Խեղճ գաղտնիքներուն հաւատալը չէր գար. շնորհքի մը պէս խնդրեցին ինձ որ երկուքը միասին ջաղացք ելլեն մեծ հօրը խօսելու... Քաջութիւնը չունեցայ մերմեկու, և բը՛ռթ, նայիս մեր սիրահարները թուան: Անոնք վեր ելլելու ըլլան, վարպետ Քոնիյլն ալ ջաղացքէն կը մեկնի: Դուռը գոցուած էր, բայց ծերուկը սանդուխտ դուռը մտնեց էր. արդաքը խիղջ գաղափար կ'ունենան պատահանին ներս մտնելու, մէկ մը սա ներսը եղած չեղած տեսնելու համար... Տարօրինակ բան, երկանաբարին սենեակը պարապ էր... Յորենի և ոչ մէկ պարկ, ոչ իսկ հատիկ մը, ալիւրի ոչ մէկ հետք պատերուն և սարկի ոստոսներուն վրէ-

րայ... Մարդ նոյն իսկ չէր աններ այն փշրուած ցորենի աղուոր տաք հոտը որ ջաղացքները կը լեցնէ... Փայտէ առանցքը փոշիով ծածկուած էր, և մեծ նիհար կատուն վրան կը մրափէր:

Վարի սենեակը թշուառութեան և լքուածի միջոցն երեւոյթը ունէր, — գէշ անկողին մը, քանի մը քուրջեր, կտոր մը հաց սանդուխտ մէկ ոտքին վրայ, և անկիւն մը երեք կամ չորս պատուած ուրակեր, որոնցմէ դուրս թափած էին գաճի կտորուանքներ և հող... Ահա ատէր վարպետ Քոնիյլի գաղտնիքը: Ահա ինչ որ կը պտտեցէր իրիկունները ջաղացքին պատիւը ազատելու և կարծեսցնելու համար թէ ցորեն կ'աղացուէր հոս... Խեղճ ջաղացք, խեղճ Քոնիյլ, երկար ատեն կար որ նոր եկողները խրած էին իրենցմէ վերջին յաճախողը, թեքը անգաղար կը շարժէին, բայց երկանաբարը պարապ կը գտնար: Տղաքը եկան լալով պատմեցին տեսածին: Սիրտս կտոր կտոր եղաւ երբ իմացայ... Առանց վայրկեան մը կորսնցնելու, դրացիներուն վազեցի երկու բառով խնդրել հասկցուցի, և որոշեցինք անմիջապէս Քոնիյլի ջաղացքը տանիլ որքան ցորեն որ կար առնելուն մէջ... Ըսեցին ու ըսելունիս մէկ եղաւ: Նայիս ամբողջ գեղը ճամբայ ելաւ ու ջաղացք հասանք ցորեն բնոցուած էջերու թափօրով մը, — իրացնէ ցորեն, այս անգամ:

Ջաղացքին դուռը բաց էր... Դրան առջև, վարպետ Քոնիյլ, գաճի պարկի մը վրայ նստած, կուլար դուրս ձեռքերուն մէջ: Ջաղացքը վերադառնալով նշմարած էր որ իր բացակայութեանը ներս մտեր էին և իր տիպար գաղտնիքը բռնել: — Վայ ինձի, կ'ըսէր: Այն ինձի մեռնիլ միայն կը մնայ... Ջաղացքը անպատուած է:

Ու կը հեծկտար աղիւզօրմ կերպով, ջաղացքը կը կոչէր ամեն տեսակ անուններով, կը խօսէր անոր հետ իբր թէ կենդանի մէկը ըլլար: Այդ վայրկեանին, էջերը սարահարթին վրայ կը հասնէին, և ամենքս ալ կը սկսէինք բարձրաձայն պողալ ինչպէս կ'ընէինք ջաղացքանութեան աղուոր օրերուն. — Է՛, ջաղացքին մարդիկ... Օ՛հէ, վարպետ Քոնիյլ, — Է՛, ահա պարկերը կը դիզուին դրան առջև և աղուոր շէկ հատիկները կը թափէին դեպիս, ամեն կողմէ... Վարպետ Քոնիյլ աչքերը խոշոր կը բռնար, թմրուած արիւն մէջ ցորեն ատեր էր և կ'ըսէր, լալով ու խնդալով միանգամայն. — Գորեն է, տէր Աստուած, ցորեն... Ձգեցէք որ աղէկ մը նայիմ, կուշտ ու կուռ: Յետոյ մեղի գաղտնալով — Ա՛հ, ես

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՑԵՂԻ ԳԱՀԻՐԷ, — ԱՌԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԿԻՆ ԶԱՊԹԻՑԷԻ ԵՆԷՔԻՆ ԴԷՄ

լաւ գիտէի որ օր մը չէ օր մը նորէն ին-
ծի պիտի գայիր... Անոնք բոլորն ալ
զոյզեր կ'էին: — Կ'ուզէիք զինքը յաղթա-
նակաւ գնդ տանիլ: — Չէ, տղաքս չէ,
ըսաւ, ամեն բանէ առաջ պէտք է որ ջա-
ղացքիս ոտակը տամ... Մտածեցէք մէկ
մը որքա՞ն առեն կայ որ ահապէն տակ
բան մը չէ զրոյս: Եւ ամենու ալ լալը
կուգար տեսնելով խեղճ ծերունին որ աջ
ու ձախ կը շարժուէր, պարկերը կը բա-
նար, երկանաբար լրաց կը հսկէր, մինչ-
դեռ ցորենը կը փշուէր և բարակ փոշին
ձեղուն կը բարձրանար: — Պէտք է ըսել
ի գովեստ մեզի որ այդ օրէն սխալ, եր-
բեք անգործ չձգեցինք Գօնիկի ջաղացը:
Յետոյ առտու մը, Գօնիկը մեռաւ, և մեր
վերջին հողմազան թռեցրը ալ դադարեցան
շարժելէ, միանգամ ընդ միշտ:

ԱԼԽՈՏԻՍ 808Է

Թարգմ. Մ. Ս. Կ.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Այս առտու Ալեքսանդրիայէն մեր
տոնացած լուրերուն նայելով, Գեր-
Այվազեան Եպիսկոպոսի հիւանդու-
թեան վիճակը պզտիկ փոփոխութիւն
մը կրած է գէպ ի լաւ, շնորհիւ «Ըսթ-
րիքին» և «Բէքալին» կերամամուր
իրեն տրուած դարմանին: Ալեքսան-
դրիոյ կառավարիչը երեքշաբթի օր
յատկապէս իր կողմէ քարտուղարը՝
Պէնէտուշի Պէյը զրկած է Առաջնոր-
դարան, Այվազեան Եպիսկոպոսի որ-
պիտութեան վրայ տեղեկութիւններ
տունելու համար:

Միևնայն օրը Անգլիոյ ընդհ. հիւ-
շատուր Պ. Կուլտ ընկերակցու-
թեամբ հիւպատոսարանի Ա. Թարգ-
մանին, այցելութեան գացած է Ա-
ռաջնորդարան նոյն նպատակաւ:

— Երուսաղէմէն Ամեն. Տ. Յարու-
թիւն Պատրիարքը 40 Յրանական
ոսկի զրկած է Պատրիարքարան, ի
նպատակ Կարնոյ երկրաշարժէ արկա-
ծեալներուն:

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Երեքշաբթի օր Մեսոպոթի շոգնաւով
Ալեքսանդրիա հասաւ Տիար Միհրան Թե-
ան, որ երկուրեւն տարի ի վեր Պրիւրէ-
մէլ իրաւարանական բարձր դասընթաց-
ներու հետեւելէ վերջ Docteur en droit
վկայականով իրեն փաստաբան կոչոյ հա-
տառուիլ յեղիպտոս:

ԹԵՐԹՈՆ «ՓԱՐՈՍ» Ի (52)

ԺԱՂԱՆ ՏԻՎԻԷ

ԲՐԷՆԱ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇՆՁՈՒԱՏ ՎԷՊ

ՊԼՈՒԽ ԺԲ.

Հարաւին կողմը եղող ուսումնարանը
արեւադարձային այդ բարեկամութեան մի-
ջոցին անհանգիստ միջոցներ կ'ըլլար:

Դաստիարակութիւն արտօնութիւն ստա-
ցած էր որ, նախաձեռնի սխալ, իր ա-
շտեկութիւնները և ուրիշ բաները սրա՞ն
հաստատէր. շնորհիւ էին իրեն նաեւ այն
կէս մթնոթիւնը զոր պալատին մէջ ինքը
միտին կը գնահատէր, և որ թող կուտար

Մեր գալստի տեղի տալով արեւ-
մու շարքին վրայ հասաւ մը ևս կաւեանայ
Տիար Միհրան Թեանին մեր մէջ վերա-
դառնալով և ապահովաբար թէ ժամանակ-
ուան մէջ լալը պիտի ունենանք զինքը
տեսնելու լուրը և հեղինակաւոր փաստա-
բաններու կարգին մէջ, արուած ըլլալով իր
մտքի և սրտի բարձր յատկութիւնները:

Սեղմելով մեր լարեկամ թեկնածի
Պէյը, իր նոր ասպարէզին մէջ կը մտադրեց
իրեն այն ամեն յաջողութիւնները որոնց
արժանի է:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԽԱՐՀԵՆ

ԱՆԿԻՍԱ

Վերջացող տարին բարեկամութիւն չկա-
նալով համար: Վերջերիս թագուհին
մահաւաճեց սկսաւ և բանակին պարտու-
թիւններով աւարտեցաւ: Յայտնի չէ թէ
1902ը պանծալի պիտի ըլլայ Անգլիոյ հա-
մար: Ամեն պարագայի մէջ կը ծանուցուի
թէ, ընկերական բարեկամութիւններ և ազա-
տական կուսակցութեան վերակազմութիւնը
եթէ տեղի չունենան, չընդ հանգստեան պի-
տի կատարուին: Նախ խորհրդարանին բա-
ցումը տեղի պիտի ունենայ, անցնալ տա-
րիւն աւելի հանգստեանութեամբ. յետոյ
թագադրութեան պատրաստութիւնները պի-
տի տեսնուին: Չատիկէն ետքը Ուէլսի
նրոթի արքայադստեր պիտի յանձնուի գոր-
ծաւորներուն: Հիմալուսէ որոշուած է որ
այդ սեանքի շէնքը մեծ կերպարանափո-
խութիւն մը պիտի չլինէ: Կողմնակի գա-
ւիթներուն մէջ պիտի չլինուին այն երկու
երեք յարկ բարձրաւանդակները, որ կրնան
տասը տասերեւե հազար հոգի բազմիլ: Վա-
նի մը օրէն յայտնի պիտի ըլլայ թէ թա-
գադրութեան հանգստեան տոնուն ո՞ր պա-
տի պիտի ունենայ թագաւորին գուլպան
հագցնել. այդ անձը, իբրեւ յիշատակ մը
նոյն գեղեցիկ օրուն, պիտի պահէ այն
շապիկը որով Էտուարտ Է. զիշերը պառ-
կած է: Կատարուելիք հանգստեանը հին սո-
վորութեան համաձայն պիտի չըլլան, վա-
նոյն հրաշխանքներուն համար մեծ յոգ-
նութիւն մըն է: Այդ հին արարողութիւն-
ները կը տրամադրեն որ ցորեկի առաջ մեծ
թափօր մը անցնի թագուհին առջև: Այ-
նուական տիկիններ ամեն տարիքէ, ամենքն
ալ երկկողմի հագուստով ու տեղօթի, և
ցուրտէն զոգլալով պէտք է պալատ եր-
թան հանգիստական կողմերով: Տիկինները,
զեռաւոր կամ տարիքոտ, երեք փետուրներ
պէտք է զետեղեն իրենց մազերուն մէջ,
առանց ուրիշ արգելադրել: Պալատ հա-
մար

իր աշակերտութիւններուն որ առանց չափա-
զանց տաքութեան աշխատին. հարեմներուն
մէջ կը սկսեն պայծառ արեւը, անտարա-
կոյս իրենց մէջ ունենալու համար փառց-
ներուն պայծառութիւնը որմէ զրկուած են:

Այդ օրը դասը դանդաղ կը թափար. հեղ-
գութիւն մը կարծես կը թափուէր աշա-
կերտներուն ետեւը, ու գառաւորին ոյժն
ալ կը մեղկացնէր: Ժերմին, շատ յոգնած,
միջոցաւոր հեղցուցիչ ծանրութեան ընկ-
նուած, չէր յիշեր որ այսչափ տաժանագին
օր մը երբեք անցուցած ըլլար. առաւօտէն
ի վեր ջերմաշափը 42 կը ցուցնէր:

Արթուն կենալու համար ըրած ջանքե-
րուն հակառակ, անյաղնիկ թմրութիւն մը
կը տիրէր իրեն վրայ, աչքերը կը ծան-
րացնէր, արտահոսները կը փակէր. կ'ըսէ-
սէր հասնալ գերեզմանին հարկաւորու-

նելէ վերջը նրբանցիկներուն մէջ պէտք է
պատին, սպասելով որ կարգը իրենց գայ,
խոտարհելու թագուհին առջև: Ասկէ վերջը
այդ արարողութիւնները պիտի չկատարուին
վասնի Էտուարտ Է. ծանուցած է թէ իր
հիւրերը պիտի նկատուին որոնց ուն-
կընդրութիւն պիտի չնորհէ: Նուազածու-
թիւն պիտի կատարուի և սեղան պիտի
տրուի. նաեւ այդ հանգստեանը զիշեր ասին
տեղի պիտի ունենան լուսադարչուած սը-
րահներուն մէջ: Այնուհետեւ Անգլիոյ հիւրերը
ալ ևս պէտք պիտի չունենան տեղօթի և
ընալու:

Թոմօսին չը վճարման պատճառաւ ան-
դի ունեցող զինուորներու ապստամբութիւն-
ները հետզհետէ կը սաստկանան: Եւսէն
իրենց հայրենիքը վերադարձող 3000 զին-
ւորներ Գալաթիէն հասնելուն՝ մերձեցին
ցամաք ելնել և քարանձախի ենթակառու-
նէ միանգամայն իրենց ճամբան շարունակել
զէպի երկիր՝ եթէ իրենց յետաժողով ամա-
կանները չվճարուին:

Զօրավար Շաքիր փաշա զրկուեցաւ զին-
ւորները հանգաւորեցնելու և անոնց զրա-
մանը վճարելու համար:

Հիւսիսէն առնուած տեղեկութեանց նա-
խով Տաւատ Մահմուտ փաշա որ Գոր-
ֆուլ արտաքինուէրով Հոսմ հաստատուած
էր, Խոտալկան մայրաքաղաքէն ալ պիտի
մեկնի Նիս երթալու համար: Սուլթանի
խնդրանքով իրաւ, Խոտալկան կառավարու-
թիւնը Մահմուտ փաշայի փափաք յայտնե-
րէ մայրաքաղաքէն մեկնելու, իր ներկայու-
թիւնը իրեն դժուարութիւններ պատճառելուն
հետեւանք:

Միւս կողմէն թուրք թերթերը կը հրա-
տարակեն Պուլոյ դատական իշխանութիւն-
ներու կողմէն ելած ձեռնարկման հրա-
մանագրի մը պատճէնը Տաւատ Մահ-
մուտ փաշայի, Պոնագի Հոսմ Գա-
րիի (35 տարեկան) և Սիլբէթի (28 տա-
րեկան) զէմ: Հրամանագրերը այս վերջին
երկուքին զիմաքները կուտայ: Յիշեալ երեք
անձինք համաձայնած ըլլալով, կ'ըսէ պաշ-
տօնագրերը, խռովաբար ձեռնարկներ կատա-
րելու, եղեռնապատ առնելու առջև պիտի
դատուին և ոստիկանական իշխանութիւննե-
րը կը հրաւիրուին զանոնք ձերբակալել ու
որ հանդիպին:

ՄԱՎՐՈՒԲՈՐՏԱԹՈ Իշխան, Յունաստա-
նի զեպարն, իր եղբոր Պ. Ժօրթ Մալ-
բորտաթոյի առողջական վիճակին վրայ
վրդովիչ լուրեր ստացած ըլլալուն արեւեան
ձեպլութեամբով ամսոյս 13ին Բարիզ մեկ-
նած է:

Թիւրք, յանձնարինս բաղձալով միայն որ
բանի մը վայրկեան գործը ձգէր, ու անձ-
նասուր ըլլար ըստին, որ անգլիայի կեր-
պով կը տանէր զինքը, կը բռնադատէր
խարտիշագիւղ զուրկ պիտի բռնելու՝ որպէս-
զի յորտայս չկործանէր սատրին վրայ ու
ըստը չտանէր:

Այս պահուս, սկսածընէն հաղորդակցու-
թիւնը փակող սրահակը վեր բարձրացաւ.
ըրէնսը երկցաւ:

— Մի՛ տեղեկանա՛ք ելա՛ք, գաւախներս,
ըսաւ աղջիկներուն՝ որ ինքնաշարժ մեքե-
նայի կարկամութեամբ ոտք կ'ընէին. յետոյ
դառնալով Ժերմինին զոր կարծես թէ ա-
ռաջին անգամ չէր նշմարած, աւելցուց՝
բարեկէն ետքը:

— Չգտմէ հիւրկալութիւն խնդրել եւ և
կամ. տաքութեան չկրցայ սկսածընէն կե-

Բ. ԴՐՈՒՆ Հրամանով ոչ-խալմ կրօնք-
ներուն պատկանող և օտար երկիր բնակող
օսմանեան հպատակներ չպիտի կարենան
իրենց հպատակութիւնը փոխել՝ կայսերական
կառավարութեան արտօնութիւն չստացած
և պէտք եղած օրինական գործողութիւննե-
րը չը կատարած. հակառակ վարուողնե-
րուն նոր հպատակութիւնը չպիտի ճանչցուի
իրենց Թուրքիա վերադարձին և պիտի նը-
կատուին իրր օսմանեան հպատակներ:

Կառավարութիւնը երկրին մուտքը ար-
գելեց այն կարգի գարթ-թօթայններուն որը
մզկիթներ կը ներկայացնեն և որոնց վրայ
կը գտնուին կրօնական վերտառութիւններ
ինչպէս նաեւ Մարգարէին ազգականաց և
բարեկամաց անունները:

ՊԱՐՈՒՅ Ծահը Երօպա պիտի երթայ
յառաջիկայ ամառ՝ ներկայ գտնուելու Անգ-
լիոյ թագաւորին թագադրութեան հանգստեան
և անկէջ Մարիէնպատի ջուրերը պիտի երթայ:

ՏԵՂԱԿԱՆ

— Օսմանեան առողջապահական ժողովը
ջնշեց Պէյրութի արտածութեանց համար
հաստատուած 48 ժամուան քարանձախն:
— Անցեալ զեկտեմբեր 27ին վերջացող
շաբթուան միջոցին Պոմպիէի մէջ ժամադրու-
եալ 266 նոր զէպը և 190 մահեր պա-
տահած են:

— Վարձիներու ընդհանուր տնօրէն Այ-
սուլ Հալիմ փաշա Ասեմ շարաթ օրը Ա-
լեքսանդրիա գնաց պէտք եղած հրաման-
ները տալու համար որպէսզի դաժնաւանդ
Իշխան Ապիւլ Մօնէյի ծննդեան չորրորդ
տարեկարձին առթիւ ողորմութիւններ բաշ-
խուին:

— Գրոմէր կոմսուհին ամսոյս 29ին ե-
րկոյթ մը պիտի տայ:

— Ն. Բ. Խալիլ վաւերացուցած է Բա-
րիկի վճարելի առնելու անգամ Պ. Ռիւլա-
նի զատուար կարգովը Ալեքսանդրիայ խա-
ղի զատարաններու մէջ, Պ. Յիւլիւսը տը
Լոնտոնի տեղ:

— Մէհմէտ Ալի արուեստագիտական
վարժարանի համար բացուած հանգանա-
կութեան գումարը կը հասնի 3,797 և
գիպտական ոսկի:

— Յաւանքիկայ երկուշաբթի 27 Յուն.
Ն. Վ. Վիլիւմ Բ. Կայսեր ծննդեան 43րդ.
տարեկարձին առթիւ գոհաբանական արա-
րողութեան մը պիտի կատարուի Գահրիէի
Գերմանական եկեղեցիին մէջ:

Նախընթաց օրը Պ. Յոն Միւլլըր ընդուն-
ելութիւն մը պիտի կատարէ Գերմանիոյ դիւ-
նագիտական գործակալութեան շէնքին մէջ:

Նալ. անշուշտ միայն այս հատուածը հա-
ղորդել է:

Եւ որովհետեւ Ժերմինի մէկ ակնարկու-
թեան վրայ՝ տղաքը գերեզմանի գոցած էին,
ստիպեց զանոնք որ նորէն նստին ու շա-
րունակին. ըսաւ որ չէր ուզեր որ իրեն
համար դասը դադարեցնէին. բաց աստի գիր-
քը հետը բերած էր, զիւրեք ամենին չէր
խանդարել:

Արգարե քնաց հատուածին խորը նստաւ,
կարդալ ձեռացուց, մինչդեռ ընտրած տեղին
խորին մթնոթիւնը բացարձակապէս անկա-
րելի կ'ընէր գիրքը որոշելու, ու Ժերմին
ստիպուեցաւ ձայնը անդողող ընելու, և
միջքը կանգուն պահելու, որպէսզի բրէնսը
նստած տեղէն, անդէն, չկարենար տես-
նել այն յուզմունքը զոր անոր ներկայու-
թիւնը իրեն կը պատճառէր, որպէսզի չի

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

ԳԱՂԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՑՆԵՐՈՒ. ԳՈՂԱՐԵՂ ԻՆԱՑ ԵՒ ԽՈՆՈԿՐԱՅՆԵՐՈՒ

Ն. Բ. Խաթիւն երեկ կէս օրին Ապրիլի պալատին մէջ ընդունեց իւր քննակալը բրէնտ ձէմալ բաշա Թոսուրը, Վիեննայի Օսմանեան դեսպանատան խորհրդականը:

Ետեւ Ն. Բարձրութիւնը ժամը 2 1/2-ին Կիլիկիոյ գնաց Երկրագործական ցուցահանդէսը բանալու համար:

—Ն. Բ. Խաթիւն Անգլիոյ Վեհ. Թագաւորին թագադրութեան հանդէսներուն համար իւր կողմանէ ներկայացուցիչ կարգեց իւր եղբայրը Մօհամմադ Ալի իշխանը և նախարարապետ Մուսթաֆա Ֆէհմի բաշան:

Կոմս Բրոմլէր ալ ներկայ պիտի գտնուի թագադրութեան հանդէսներուն:

—Ն. Բ. Խաթիւն 3րդ. կարգի Օսմանիէ պատուանշանը շնորհեց Աղբաւադրիոյ Հելլենական Ընդհ. հիւպատոս Պ. Ն. Սըրթիտի:

—Ն. Վ. Մուսթաֆա բաշա Ֆէհմի նախարարապետ և ներքին գործոց նախարար յառաջիկայ երկուշաբթի Վերին Եփեսոս պիտի ուղևորի:

—Տագաւորի կառավարիչ Ատի բաշա Եէկէն առջի օրը Մանսուրայէն հոս հասաւ:

—Հանրային կրթութեան նախարարութեան ընդհ. Պ. Ա. Վ. Հոսիթըն պաշտօնէն հրաժարելով անցեալ կիրակի Անգլիա մեկնեցաւ:

—Երեկ կէս օրին յետոյ ժամը 3ին տեղի ունեցաւ Երկրագործական ցուցահանդէսի բացումը, նախագահութեամբ Ն. Բ. Խաթիւն:

Այս տարուան ցուցահանդէսը աւելի փայլուն է քան ուրիշ տարիները. արմտիքի մասին մէջ մանաւանդ, ճոխ պէսպիսութեան մը նմաները ցուցադրուած են որոնք լաւ գաղափար մը կուտան մշակութիւններու յառաջդիմութեան վրայ:

Ոչ նուազ ուշագրաւ է նաև կենդանիներու բաժինը ուր գիրուկ կովեր, հաստամարմին ցուլեր, պարարտ օչխարներ և թեթեւոտն այծեր մարդու հիացումը կը գրաւեն պարզապէս:

Մեր ընթերցողներուն կը յանձնարարենք երթալ տեսնել այդ ցուցահանդէսը ուր մեկէ աւելի շահեկան բաներ կան տեսնելիք:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՆՏՈՆ, 20 Յուն.— Սըր Կ. Թոպման Կօլտի «Թայլոյ» կը գրէ թէ ինք կատարելապէս համոզուած է Ուկրաինայի

կարենար իւր գէմքին վրայ զուգակել այն բոցավառ վրդովումը զոր անոր նայուածքը՝ որուն իր վրայ հաստատուած ըլլալը կը զգար. կը հաղորդէ իրեն:

Դասը աւարտելու մօտ էր. յանկարծ բակին մէջ ձայնելու աղմուկ մը լսուեցաւ, և ներքինի մը դուռը բանալով՝ ներս մտան երեք քուլածածուկ կիներ, որ վստահ քաշուածքով մը հատուածին մէջ իսկոյն յառաջացան: Երբ բռնեց, կարծելով թէ մօրը հիւր եկած է, կը պատրաստուէր հեռանալ, այդ կիներուն առաջինը, որ մթութեան հակառակ՝ դանի տեսած էր, զէպ ի անոր կողմը վազեց երբ ան սկըմըրքին դուռը կը բանար: Քօղը տեսնող ձեռքով մը վրայէն քակեց նետեց մէկը, և հապառան գնաց ետին գորգին վրայ փռուեցաւ: Իր տիրոջը ոտքերուն առջև ծնրադրած,

երկաթուղիին իւր նմաններուն վրայ ունեցած մեծ դերազանցողութիւնը: Միանգամայն ի վեր կը հանէ ուղիւսի ցեղէ գաղթականութեանց համար այդ առողջարար կլիմային առաւելութիւնները:

ԼՈՆՏՈՆ, 20 Յուն.— «Մօնիթըր Բօսթը» Պուշիւրէ կ'իմանայ թէ երեք պատերազմա-նաւեր Բոսթըն կը գտնուին և թէ քաղաքին չորս կողմը խրամատներ բացուած են: Պատրայի թուրք զօրախումբէն գումարտակ մը Բոսթընի շրջանը հասած է:

ԼՈՆՏՈՆ, 20 Յուն.— «Թայլոյ» կը անդելանայ թէ Թրանսիլվի արեւելակողմի Պոլսերը վճռուած են նորերս տեղի ունեցած գերադուրեմանց հետեւեց:

ԼՈՆՏՈՆ, 20 Յուն.— Երեսփոխանաց Ժողովին մէջ Պ. Չէմպլըէյն կը յայտարարէ թէ Պօէր պատուիրակներու կողմանէ հաշտութեան առաջարկութիւններ եղած ըլլալը ճիշդ չէ: Պ. Գօլէ յանուն ազատականաց պաշտօնապէս առաջարկեց ուղերձին փոփոխում մը, յայտարարելով թէ հակառակ կուտակցութիւնը պատրաստ է ուժ տալու պատերազմի շարունակութեան համար ձեռք առնելիք բոլոր ազգեցիկ միջոցներու, միայն թէ նախարարներու հետեւած ընթացքը թշնամութեանց վերջ մը տալու և տեսական հաշտութիւն մը ձեռք բերելու հանգամանք չունէր: Պ. Չէմպլըէյն ըսաւ թէ այդ փոփոխումը խաղալիս փորձ մըն էր ազատական կուտակցութեան անհաշտ տարրերը իրարու միացնելու մտօք: Կարելի չէ, կ'ըսէ այլևս Լորտ Բիշօփի կողմէ եղած և Պօէրներէն մերժուած առաջարկութիւնները նորէն նկատողութեան առնուլ: Կատարութիւնը չը լսելու պիտի չը զարնէ բանաւոր առաջարկութիւններ, սակայն ապահով պէտք է ըլլայ որ անոնք հեղինակաւոր աղբիւրէ մը կը բղկին: Չը կարծիք որ Պ. Բիշօփի կամ իւր շուրջը գտնուողները պահանջուած հեղինակութիւնը ունենան բանակցելու մասին. միտ կողմանէ Պ. Պ. Շալը Պուրիէր և իմէյն չեն կարող պատերազմի դաշտին վրայ գտնուող զօրախումբերուն հետ հաղորդակցել, և Պօէր զօրավարներն չեն կրնար նաև իրենց մէջ յարաբերութիւն ունենալ:

Պ. Պրօքթըր ծանոյց թէ զինուորագրուած 2000 Պուրիէրներ սքանչելի ծառայութիւն կը մատուցանեն:

ԼՈՆՏՈՆ, 20 Յուն.— 1901ին անգլիական նաւային զործարաններուն վրայ ընդամենը 1,524,739 թոնո տարողութեամբ նաւեր շինուած են, 82,000 թոնո աւելի 1900ին կառուցուածներու թիւէն որ արդէն անօրինակ էր:

արցունքներով թրջելով և համբոյրներով ծածկելով անոր ձեռքը զոր յաջողած էր ձեռք ձգել, Իքպալ, իր խռովութեան անշարժութեան մէջ անմոռնի անբարբառ, կը գործադրէր այն փոքրիկ տեսարանը զոր ամիսէ մը ի վեր կը պատրաստէր:

Անտարակոյս գիպուածը իրեն նպաստաւոր կերթար, որովհետև կը թողոր որ, պալատը մտնելուն, բռնեց զիմացը կ'իլլար: Վայրկեան մը վարանեցաւ Մուրատ. իրեն մէջ կ'իյնէր բոլորակալ փափականատուութիւնը, եւրոպական դաստիարակութեան իրեն մէջ գրած բոլոր ամօթխածութիւնը կը վերաւորուէր այդ վիշտին ցուցադրութիւնէն, այն յամառութիւնէն որով Իքպալ իր ծունկերուն փարած կը մնար, շրթունքները իր ձեռքերուն փակցուցած՝ իր բովանդակ պաշտամունքովը, այնպիսի սրտածմելի խնամար

ԲԱՐԻՉ, 20 Յուն.— Այսօր Երեսփոխանական Ժողովին մէջ տեղի ունեցաւ հարցապնդում մը Լա Հէյի գնապահախօրհուրդին և Թրանսիլվի պատերազմին վրայ: Արտաքին գործոց նախարար Պ. Տէքասէ յայտարարեց թէ չպիտի վարանէր միջնորդութեան մը նախաձեռնութիւնը ունենալ եթէ այդ միջոցը երկու կողմանէ ընդունելութիւն գտնէր: Պէքադարար, յարեց, նմանօրինակ ընդունելութիւն մը յօտալու ունէ նշան չը կայ: Լաւ ըմբռնուած հայրենասիրութիւնը պարտք կը դնէր Ֆրանսայի քաղաքականութիւնը չվտանգել: Ֆրանսայի պարտականութիւնն է ամբողջովին ինքինքն նստիլ իւր ազատութեան գործին: Ժողովը ընդունեց պարզ օրակարգը:

ԼՈՆՏՈՆ, 21 Յուն.— Թէև քաղաքագործներէն միայն 2000 հոգի ուղևած էր, սակայն 3000 հոգի զինուորագրուեցան որոնք ամառայն վերջը Հարաւային Աֆրիկէ պիտի երթան:

ԼՈՆՏՈՆ, 21 Յուն.— Կայսերական կառավարութիւնը Աւստրալիոյ և Նոր Զելանդիայի հասկցուց թէ հաճութիւնով պիտի ընդունէր 1000 հոգի քաղկացած նոր օգնական զօրավարներ:

ԼՈՆՏՈՆ, 21 Յուն.— Հարցապնդումի մը պատասխանելով, Պ. Տէքասէ արկարացուց Լա Հէյի ատենանիւն կողմանէ Պօլսերուն կոչին եղած պատասխանը: Աւելցուց թէ միջամտութիւն մը՝ պատերազմի նշանակութիւն պիտի ունենար. սակայն իր հայրենասիրութիւնը իր վրայ պարտք կը դնէ զգուշանալ այնպիսի հետեւեցներ յառաջ բերող որեւէ արարքէ:

ԼՈՆՏՈՆ, 21 Յուն.— Շաքարի դեռ պահախօրհուրդը իր նիստերը վերսկսաւ:

ԼՈՆՏՈՆ, 21 Յուն.— Լորտ Բիշօփ ամառայն 20 թուականով կը հեռագրէ թէ տեղատարափ անձրեւներ խափանեցին գիւտութեան զործողութիւնները:

Վերջացող շաբթուան մէջ Պօլսերը ընդամենը 255 հոգի կորուսին, սպաննուած վիրաւորուած, գերի բռնուած կամ անձնատուր եղած: Օրանմի հիւսիս-արեւելեան կողմի Պրօքթօնի գիծը յառաջացման լաւ ճամբու մէջ է. այն շոկատները որոնց համար այդ գիծը իր գործողութեան հիմ պիտի ծառայէ, ի մօտոյ գործելու պիտի սկսին:

ԼՈՆՏՈՆ, 21 Յուն.— Սըր Մ. Հիւսթիս շաքարի ներածութեան գէմ գրուած տուրքերը բաժնաւոր գիտաւորութիւն չունի: «Երեսփոխանաց Ժողով».— Այս գիշեր-

ուան վիճաբանութիւնները սղեւորութեան զօրի էին: Ժողովարարէն կ'իտով պարագէր: Պ. Պ. Լապուշի, Լորտ Բօքք և Իրլանտացիք մերժեցին այդ տայ Պ. Գալլիի առաջարկած փոփոխումին: Ապահով է որ կառավարութիւնը կարեւոր մեծամասնութիւն մը պիտի ստանայ:

Լորտ Ճօրձ Համիլթըն կը յայտարարէ թէ երկաթուղիները աւելցնելու մասին ուսումնասիրութիւններ կը կատարուին, սակայն այս պահուս ճշգրիտ յայտարարութիւն մը ընել անկարելի է:

ԲԱՐԻՉ, 20 Յուն.— Երեսփոխանաց Ժողովին մէջ արտաքին գործերու վրայ վիճաբանութեանց միջոցին, Պ. Տէքասէ Ֆրանսայի Թուրքիոյ մէջ ունեցած ազդեցիկ դիրքին վրայ խօսելով ըսաւ թէ Ֆրանսական վարժարանները Ֆրանսայի ազդեցութիւնը պահպանած և Ֆրանսական ձեռնարկութիւնները մեծ յառաջդիմութիւններ կատարած են հոգ:

Միշտ աչքէ չը հեռացներ այն շահը թէ ձիպութիւն Հարրար երկաթուղոյ գիծը Ֆրանսական պէտք է մնայ: Թէքսէօլի ինչպէս նաև Սիամի մէջ դաշնագրութիւններուն պահպանումը և Ֆրանսական իրաւունքներուն յարգուիլը միայն պահանջած է:

Պ. Տէքասէ խօսքը վերջացուց Ֆրանսայի իտալիոյ հետ ունեցած խիստ բարեկամական յարաբերութիւնները և Ֆրանսո-Ռուս դաշնակցութեան զօրութիւնը ցուցնելով:

ԲԱՐԻՉ, 21 Յուն.— Արտաքին գործոց երմտացոյցի վիճաբանութեան միջոցին Պ. Տէքասէ խօսքը առնելով, հետեւեալ կերպիւ միտքը բացատրեց:

«Միտքի շաւայիէ ցոյցը կէս նպատակ ունեցաւ մեր չը ճանչցուած իրաւունքները պաշտպանելու և գոհացում ստանալու առանց ուրիշներուն իրաւանց զգչելու: Միտքի չը մնալով արդարացուցիչը այն վստահութիւնը զոր աշխարհ մեզի կը ցուցնէ»:

Պատասխանելով Պ. Էթէնի որ Հապէլ-Խաւանի գէմ Անգլիոյ սպանալիքները ի յայտ բերել կը ջանար, Պ. Տէքասէ յայտարարեց:

«Ֆրանսական կառավարութիւնը ձիպութիւն Ասիո-Ապագա երկարելիք երկաթուղիին շինութեանը կը հսկէ. ինքը կը փափաքէ որ այդ գիծը աւարտի անոր սկըսուելուն յղացուած գաղափարին համաձայն»:

նոյ իրեն համար զգացած հրայրքին վրայ:

Մուրատ պարտաւորեցաւ պահելու իր տարակոյսները, աղկալանք մտածումներուն իսկ անդէս մնալու: Ժեմքէն շարժում մը ըրած չէր.— Իքպալ ներս մտնելուն պէս, մտածած էր որ բռնեց զանի ետ կանչել տուած էր, և թէ անով կուգէր մօտաւ իր մասնակից ըլլալը մերժած սէրը. իր գերուհին հեծկտանքներուն հանգէպ Մուրատի շուրթած կացութիւնը, այն զանազութիւնը որով իր ձեռքերը կ'անշատէր անոր մօլեկան համբոյրներէն, աղջիկը իր այդ գաղափարին մէջ ալ աւելի ամրացուցին: Յաւմը զգաց տակէ. երբէք մաքէն չէր անցներ որ, զանոնք այդ վիճակին մէջ՝ գրեթէ իրար գրկած տեսնելով՝ այդպիսի անհասկնալի կսկիծ մը զսպելու պիտի պարտաւորուէր:

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵՅԵԱՆ

Երկրորդական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ախտային հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար և նման կեղծ ախտանշաններու, քանակներու ոսկիէ, աղիւմիթիւնէ, քաղցրէ, Ապահով և տոկուն քլորֆորմ ոսկի, բլաթին, ևայլն, Լինտերու հիւանդութեանց զարսանում երկրորդական և ուրիշ միջոցներով:

ՄՈՒԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒՆՈՐԲԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1843 ՎՆ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷՎ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՅՍՐ ՅՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կարելի դուրսբերելու կը գործադրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒԶՈՒԱԼ ԼԱՅՑԻ սակագինը և ապահովագրութեան դանդաղան դրուածքները չափազանց արագ մի՛ ապահովագրուիք. — Առատաձեռն պայմաններու ճշգրտութեանց համար դիմել ի Գահիրէի առ Պ. Ն. ԳԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼԺԻՇ, Ընդհ. ներկայացուցիչքը՝ Աղեքսանդրիա Մեթ. Թ. ՌԱԼԻ, գլխավոր գործակալու Գ. ԵԿԱՆՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐՈՄԱԿԼՈՒԹԻՒՆ 200,000,000 ՖՐԱՆԿ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ՅԵԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ժգլիթայիկ հաշիւներ կը բանայ արքայաւոր անանդներու վրայ:

Յարանայի և օտար երկրներու վրայ կ'ուսայ շէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը դանձէ եղիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ. ձեռնած գրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաւանդ մուտհաններ կ'ուսայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԽԵՐՈՎ

ՅՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿԵՆՈՒՄ. — Ամեն շորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բերէա, Իզմիր, Միտլի և Կ. Պոլս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾՄԱՆՈՒ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգեհանները Բերէա հանգիպելուն, Արքայապետի և Միկնոյն Գիւր.

Բերէա հանգիպելուն, Արքայապետի և Միկնոյն Գիւր.

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.

ՄԵԿԵՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոն-Սայիտ, Եմֆա, Հայֆա, Պէյրոթ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնդերուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղեքսանդրիա ամեն շոգեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տասնընչին օրը անգամ մը՝ երթեկ կարմիր

Ծովու հետեւալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանայ համար դիմել Ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բոն-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գիւրի ամեն մասնաճիւղերուն:

1--1902

ՅԱՆՋՆԱԿԱՐԳ-ԴՈՐԾԱԿԱՐԳ ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և չըժակներէն կ'ընդունուին Պոլս, Վիեննայի և արտասահմանի ուրիշ կղերները դանդաղ ամեն տեսակ զերքերու, ինչպէս նաև Համպուրի, Պրոնշուի, Վիեննայի, Թեանց տոմսակներու, Եգիպտական Գրէաի Գոն-սիէի, Բոմբէյի երկաթուղոյ բրոմէաներու, և դարձեալ ամսավճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:

Արժեթղթերու, վեճակահանութեանց վերաբերեալ ապագայ ծէնքերը ընդունուին կանխիկ փութի մէջէն: Գիւրքերու համար կարելի է նախապէս կէսը զրկել և մնացեալը «զոնթոս» պուրսման» վճարել այն պահուն, երբ յանձնարարութեանցը զրկուին իրենց հասցէներուն:

Մինչև 20 յըշ. արժէքով յանձնարարութիւններու համար Եգիպտ. Յ. միլիոնոց դրոշմաթուղթեր կ'ընդունուին:

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի ևայլն ծախսեր միշտ յանձնարարութեանցը կը պատկանի:

Հասցէ՝

Garabed Erzenzatsian
Rue Abdul-Aziz

CAIRE

Ա. ՄԱՅԷՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

—X—

Մեծ վաճառատուն հանդերձեղինաց, արանց, կանանց և տղայոց հասար:

Չափի վրայ զգեստներ, յաւազոյն պայմաններով:

ՎԵՐԶԻՆ ԳԻՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԵԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԽՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի մէջ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԵՐԷԻ, ԻԶՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՅՏԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգեհաներով

ԱՆՈՐԴԷՐ ՆԻՔՕԼՍ. արդթ. թ. 5500	ՉԻՒԱՅՈՅ տարադրութիւն թ. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ. " " 5500	ՉՍԻՐ " " 5500

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ յանդուր մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱՅԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻԶՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ յանդուր մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱՅԱ, ՊԷՅՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻԶՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Աղեքսանդրիա, Բիքսասաւ փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խաղիական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագրութիւն	Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ	" " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բայմեր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ: Մասնաճիւղեր. Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի անանդներ, դրամ փոխ կ'ուսայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՈՒՄԱՄԱՐՄՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլի հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, անդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պէտք է աւելնալ վերջ ԲԵԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու գեղէն մէյքէլ քիչ առնել:

ԲԵԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ աւելցային գեղերու նման չի խանդարեր ստամբուր:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

45—316